ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/128

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2025 թ. N 128

«ԱՎԻԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ**
Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Զվարթնոց միջազգային օդանավակայան**
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մայիսի 07-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԱՈՒԿ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 02 փետրվարի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 26 սեպտեմբերի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 04-06 դեկտեմբերի, 2024 թ
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 18 փետրվարի 2025 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 04 մարտի 2025 թ.

ԱՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Գագիկ Քթրյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի որակի ապահովման բաժնի ղեկավար:
- **Օլեգ Գևորգյան՝** տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
- **Գայանե Համբարձումյան՝** Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, փորձագիտական խմբի անդամ:
- **Զարուհի Հակոբյան՝** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԱՈՒԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ԱՈՒԿ-ում առկա են բարելավման կարիք ունեցող ուղղություններ, որոնք վերաբերում են որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացին

ԱՈՒԿ-ը քայլեր է ձեռնարկում կրթական ծրագրերը ազգային և միջազգային չափորոշիչներին համահունչ կազմակերպելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավման տեսանկյունից անհրաժեշտ է մի շարք բարելավումներ: Խորհուրդ է

տրվում վերանայել կրթական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը՝ հստակ սահմանելով, թե ով է քոլեջի շրջանավարտը և ինչ դեր ունի աշխատաշուկայում: Այս տեղեկատվությունը պետք է համակարգված արտացոլվի ինչպես ծրագրերի նկարագրությունում, այնպես էլ որակի ապահովման փաստաթղթերում: Նպատակահարմար է կենտրոնում ներդնել շրջանավարտների հետագծման հստակ մեխանիզմ՝ ստեղծելով տվյալների հավաքագրման և վերլուծության մշտադիտարկվող համակարգ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է լրացնել նյութատեխնիկական ռեսուրսների բացերը՝ կրթական գործընթացում ներդնելով ժամանակակից լաբորատորիաներ, սիմուլյացիոն ծրագրեր և տեխնոլոգիական սարքավորումներ՝ ուսանողների գործնական և տեխնոլոգիական հմտությունների զարգացման համար: Դասախոսական կազմի զարգացման և կայունության ապահովման ուղղությամբ կարևոր է մշակել շարունակական վերապատրաստումների և խրախուսման քաղաքականություն՝ միաժամանակ խթանելով երիտասարդ մասնագետների ներգրավումը կենտրոնի գործունեությանը:

II.Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում

ԱՈՒԿ-ի առաքելությունն ու տեսլականը ներկայումս լիարժեքորեն չեն արտացոլում նրա իրական և հեռանկարային գործունեության բնույթը: Գործունեության ուղղության պարզեցումը կնպաստի նաև կրթական ծրագրերի կառուցվածքի հստակեցմանը: Կառավարման համակարգում անհրաժեշտ է ամրապնդել տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը՝ ապահովելով որակի ապահովման գործող մեխանիզմների ակտիվ կիրառում:

Նպատակահարմար է մշակել փուլային և իրագործելի զարգացման պլան՝ որը կհստակեցնի ինչպես է կենտրոնը հաղթահարելու առկա մարտահրավերները: Այդ պլանում պետք է ներառել.

- առաքելության վերանայում,
- կրթական ծրագրերի կառուցվածքի վերանայում,
- որակի ապահովման համակարգի ամրապնդում,
- հետազոտական գործունեության մեկնարկ,
- շրջանավարտների հետագծման ուսումնասիրություն,
- աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների ուղղությամբ համագործակցային նոր բիզնես մոդելի իրագործում:

III. *Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը դեռևս չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը*

ԱՈՒԿ-ում հետազոտական գործունեությունը և միջազգայնացումը դեռևս չեն ապահովում հաստատության կայուն զարգացումը: Խորհուրդ է տրվում կրթական ծրագրերում ներառել ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման բաղադրիչներ՝ կուրսային աշխատանքների, կիրառական առաջադրանքների և ուսումնասիրությունների միջոցով: Միաժամանակ նպատակահարմար է զարգացնել միջազգային համագործակցությունները՝ հաստատելով կապեր արտասահմանյան կրթական հաստատությունների հետ և նախաձեռնելով ուսանողների շարժունության նախագծեր:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ԱՈՒԿ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված

փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույցը:

3. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
4. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
5. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԱՈՒԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մայիսի 07